Արձանագրություն N 2

«ԱՐԶՆԻՀ-ԳՀԱՊՁԲ-2018/1 ԱՊ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

գ. Արզնի 05 հոկտեմբերի, 2018թ.

Ժամը՝ 13:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Է. Աֆյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Հարությունյանը և Ա. Լալայանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Մովսիսյանը

I. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին

1.1. **Ընդունել ի գիտություն, որ.**

Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| հ/հ | Կազմակերպության անվանումը | Հասցեն |
|---|---|---|
| 1 | «Հովհաննիսյան Իվան » ԱՁ | Կոտայքի մարզ , Արզնի ավան 11 փող., տուն 30<br>Էլ. փոստ՝ ivan.hovhannisyan.91@mail.ru |
| 2 | «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ | Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, 2-րդ փ. , տուն 28<br>Էլ. փոստ՝ alfa.trade01@mail.ru |

1.2. **Հայտ պարունակող ծրարների կազմման և ներկայացման համապատասխանությունն իրավերով սահմանված կարգին.**

Մասնակիցների կողմից ներկայացրած ծրարները համապատասխանում են իրավերով նախատեսված պահանջներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

1.3. **Բացված ծրարներում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և դրանց կազմման համապատասխանությունը իրավերով սահմանված վավերապայմաններին**

Բոլոր փաստաթղթերը առկա են:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

1.4. Հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները.

1.4.1 «ԱՐՁՆԻՀ-ԳՀԱՊՁԲ-2018/1 ԱՊ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նախահաշվային գինն է.

| Աշխատանքի անվանումը | Նախահաշվային արժեք /ՀՀ դրամ/ |
|---|---|
| *ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի աղբարկղների մատակարարում և տեղադրում* | 1 931 510 |

1.4.2 Մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները /պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով/.

| | Մասնակցի անվանումը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|
| 1. | «Հովհաննիսյան Իվան » ԱՁ | 1 368 000 | - | 1 368 000 |
| 2. | «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ | 3 600 000 | - | 3 600 000 |

1.4.3 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան անճշտություններ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

1.5. Հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին.

Հրավերի վերաբերյալ պարզաբանման հարցումներ չեն ստացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

II. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցների որոշման և հայտարարության մասին

2. Հայտը գնահատվել է «ԱՐՁՆԻՀ-ԳՀԱՊՁԲ-2018/1 ԱՊ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման պահանջներին, բացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերն առկա են և

համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին և գնահատվել են «Բավարար»:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

2.1. Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.4.2–րդ կետը՝ հայտ ներկայացրած բավարար գնահատված մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝ «ԱՐՁՆԻՀ-ԳՀԱՊՁԲ-2018/1 ԱՊ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց **առաջին տեղ զբաղեցրած մասնակից** ճանաչել «Հովհաննիսյան Իվան » ԱՁ–ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

2.2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի No. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները, հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով՝

1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից, ինչպես նաև գրանցամատյանի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում.

2) իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում:

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

4) էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

III. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին**

3. «ԱՐԶՆԻՀ-ԳՀԱՊՁԲ-2018/1 ԱՊ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ոչ ուշ, քան Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 14:00-ն, ՀՀ Կոտայքի մարզ, գ.Արզնի, 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6 համայնքապետարանի վարչական շենք N-1 հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

Հանձնաժողովի նախագահ՝

Էդիկ Աֆյան

Հանձնաժողովի
անդամներ՝

Նելլի Հարությունյան

Արտաշես Լալայան

Հանձնաժողովի քարտուղար ՝ Մարի Մովսիսյան

...ստատված է

28.09.2018թ
Ընդամենը՝ 3 էջ

Կ.Տ.

# Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

**,ԱՐԶՆԻՀ-ԳՀԱՊՁԲ-2018/1 ԱՊ ծածկագրով**
**Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի**

| | |
|---|---|
| Պատվիրատուի անունը՝ | ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի Համայնքապետարան |
| Ընթացակարգի ծածկագիրը՝ | **ԱՐԶՆԻՀ-ԳՀԱՊՁԲ**-2018/1 **ԱՊ** |
| Ընթացակարգի քարտուղար և գրանցամատյանի պատասխանատու՝ | ------------------------ Մ. Մովսիսյան<br>(ստորագրություն) |

¾ç N 1

# Մաս I
## Գնանշման հարցման ընթացակարգի հայտեր

| h/h | Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (անունը, ազգանունը) | Մասնակցի այն գրության ելից և պատվիրատուի նույն գրության մտից համարները,որով ներկայացվել է հայտը | Հայտի ստացման | | Հայտը գրանցողի ստորագրությունը | Նշագրություն |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ամիսը, ամսաթիվը | ժամը | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | ԱՁ Իգոր Հովհաննիսյան | Հայտը ներկայացվել է առձեռն | 05.10.2018թ | 13 15 | [signature] | |
| 2. | «ԱԼՖԱ ՊՐԵՅԴ» ՍՊԸ | Հայտը ներկայացվել է առձեռն | 05.10.2018թ | 13 25 | [signature] | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

## Մաս II
## Սահմանված կարգի պահանջների խախտմամբ ներկայացված գնանշման հարցման ընթացակարգի հայտեր

| հ/հ | Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (անունը, ազգանունը) | Մասնակցի այն գրության ելից և պատվիրատուի նույն գրության մտից համարները,որով ներկայացվել է հայտը | Հայտի ստացման | | Հայտը գրանցողի ստորագրությունը | Նշագրություն |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ամիսը, ամսաթիվը | ժամը | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

¾ç N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ КОТАЙКСКИЙ МАРЗ МУНИЦИПАЛИТЕТ с. АРЗНИ

*03502289*